

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
Վ. Զիլավյանի մոտ կայացած խորհրդակցության

ք. Երևան
14.06.2019թ.

Ժամը՝ 15:00

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

- Լ. Ավետիսյան Նախարարության բնապահպանական ուղղության ծրագրերի ու մոնիթորինգի վարչության պետ,
- Մ. Այդինյան Նախարարության ԲՌԾՄ վարչության Ռազմավարական ծրագրերի ու մոնիթորինգի բաժնի պետ-վարչության պետի տեղակալ,
- Հ. Մկրտչյան Նախարարության քարտուղարության արձանագրային և արխիվացման բաժնի պետ,
- Ա. Մխիթարյան Նախարարության ԲՌԾՄ վարչության Ռազմավարական ծրագրերի ու մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ,
- Գ. Օգանեզովա Հանրային խորհրդի բնապահպանության հանձնաժողովի անդամ,
- Է. Արզումանյան Հայաստանի ԲՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ,
- Գ. Մուշեղյան Հայաստանի ԲՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ,
- Գ. Ղազինյան Հայաստանի ԲՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ,
- Լ. Ներսիսյան Էներգաջակցման հիմնադրամ,

Օրակարգ՝ ՀՀ 2020-2022 թվականների (ներառյալ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի) պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի քննարկում:

Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար պարոն Վ. Զիլավյանը ներկայացրեց ՀՀ 2020-2022 թվականների (ներառյալ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի) պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կառուցվածքը և ամփոփ ցուցանիշները, ինչպես նաև առաջարկեց անցկացնել բազմակողմանի քննարկում:

Լ. Ավետիսյանը ներկայացրեց 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, մասնավորապես՝ նախատեսված գումարները և ակնկալվող աշխատանքները:

Տիկին Օգանեզովան հետաքրքրվեց Սևանա լճի ափամեծ տարածքների մաքրման ներկայիս և նախորդ տարիներին իրականացրած աշխատանքների ծավալով, ինչպես նաև խնդրեց իրեն տրամադրել տեղեկատվություն դրանց վերաբերյալ:

Տիկին Լ. Ավետիսյանը նշեց, որ ծրագրում նախատեսված է Սևանա լճի ափամեծ տարածքների մաքրման աշխատանքները, իսկ նախորդ տարիների իրականացրած աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը կտրամադրի էլեկտրոնային փոստով:

Տիկին Օգանեզովան հարցրեց, եթե ծրագրում ներառված է կենդանաբանական այգին, ինչու ընդգրկված չէ բուսաբանականը, ինչպես նաև առաջարկեց քննարկել և առաջիկայում ներառել այն ծրագրում:

Տիկին Լ. Ավետիսյանը պատասխանեց, որ Կենդանաբանական այգու ընդգրկումը շրջակա միջավայրի նախարարության բյուջեում պայմանավորված է նոր ծրագրային բյուջետավորման գործընթացով, նշված միջոցառման համար նախարարությունը հանդիսանում է բյուջետային գլխավոր կարգադրիչ և կենդանաբանական այգին չի հանդիսանում նախարարության համակարգի կառույց, իսկ Բուսաբանական այգին ընդգրկված է ԳԱԱ-յի համակարգում: